ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ[1] ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

հ/հ	**Առաջարկի անվանումը**	**Առաջարկի բովանդակությունը (ներառյալ բյուջեն)**	**Առաջարկի կարգավիճակը** • *Ընդունվել է* • *Մերժվել է*	**Մերժման դեպքում՝ հիմնավորումը**
1.	*Առափաշենում «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցի ստեղծում*	*Առաջարկվում է Առափաշեն բնակավայրում հիմնել «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոց, որը կդառնա ստեղծարարության, նորարարության և զարգացման կենտրոն: Այն կապահովի համայնքի երեխաներին ու երիտասարդներին բարձրորակ տեխնոլոգիական կրթությամբ, կխթանի նրանց հետաքրքրությունը ծրագրավորման, ռոբոտաշինության ու ինժեներության նկատմամբ:*	*Մերժվել է*	*Առափաշենի միջնակարգ դպրոցի վերանորոգման հարցը Կառավարության կողմից արդեն իսկ հաստատված է: Վերանորոգումից հետո համայնքը կմիջնորդի «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցի ստեղծման համար*
2.	*Երիտասարդական կենտրոնի ստեղծում երիտասարդների զարգացման և կրթության համար*	*Նախագծի նպատակն է հիմնել մի կենտրոն, որտեղ Արտիմետ գյուղի երիտասարդները կարող են զարգացնել իրենց հմտությունները, ձեռք բերել նոր գիտելիքներ և ակտիվորեն մասնակցել համայնքային կյանքին: Կենտրոնը կծառայի որպես միջավայր, որտեղ երիտասարդները կարող են մասնակցել տարատեսակ ծրագրերի, դասընթացների, սեմինարների, մշակութային*	*Ընդունվել է*	---

[1] Աղյուսակում լրացվում են Առաջարկների ներկայացման փուլում առցանց և թղթային տարբերակներով ներկայացված բոլոր առաջարկները:

		միջոցառումների և այլ միջոցառումներին:		
3.	Գայ գյուղում մանկական խաղահրապարակի և զբոսայգու կառուցում	Առաջարկվում է Գայ գյուղի կենտրոնում՝ կանաչապատ հատվածում ստեղծել մանկական խաղահրապարակ և զբոսայգի, ինչը կնպաստի մեր ապագա սերունդների առողջ զարգացմանը, երեխաների զբաղվածության ապահովմանը, ինչպես նաև կբարձրացնի համայնքի ստատուսը մեր տարածաշրջանում:	Մերժվել է	2024 թվականի սուբվենցիոն ծրագրով արդեն իսկ հաստատվել է
4.	Ուսումնական, ժամանցային, ինտելեկտուալ կենտրոն Ակնաշեն գյուղի պատանիների և երիտասարդների համար	Գյուղում մշակութային կենտրոն ունենալու կարևորությունը հայտնի է բոլորիս: Մշակույթը զարգացնում է ոչ միայն մարդու ճաշակը, այլև ձևավորում է մտածելակերպ և բնավորություն: Արվեստի և արհեստի հետ շփվող մարդը կատարյալ հասարակության հիմքն է: Այդ հասարակությունը նաև ձևավորում է ուժեղ ազգ: Եվ ամեն մեկս պետք է աջակցենք և ստեղծենք այդ հասարակությունը:	Մերժվել է	2024 թվականի սուբվենցիոն ծրագրով արդեն իսկ հաստատվել է
5.	Ճանապարհի ասֆալտապատում	Առաջարկվում է Ակնաշեն բնակավայրի Բարեկամության փողոցի ասֆալտապատման նախագիծը: Քանի որ ճանապարհի անհարթությունները խոչնդոտ են դառնում ծանրաբեռնված մեքենաների շարժման համար: Ճանապարհը հանդիսանում է միջհամայնքային և նշված ճանապարհից օգտվում են ոչ միայն	Մերժվել է /կմիավորվի նմանատիպ մեկ այլ առաջարկի հետ/	Իրականացման բյուջեն գերազանցում է ավագանու հատկացրած սահմանաչափը

		Ակնաշեն բնակավայրի բնակիչները, այլ նաև հարակից գյուղերի բնակիչները՝ Գայ, Հայկաշեն, Մեծամոր, Ջրառատ, Արաքս:		
6.	Ասֆալտապատում	Հաշվի առնելով այն, որ փողոցների ասֆալտապատման աշխատանքների իրականացումն ապահովվում է անվտանգ երթևեկությունը և մարդկանց բնականոն տեղաշարժը, առաջարկվում է ասֆալտապատել Ակնաշեն-Գայ-Մեծամոր ճանապարհատվածը: Գայ բնակավայրի ճանապարհը գտնվում է վատ վիճակում, առկա են ջրափոսեր, քանդված հատվածներ, որոնց առաջացրած փոշուց անհնարին է դառնում ուղքով տեղաշարժվելը:	Մերժվել է /կմիավորվի նմանատիպ մեկ այլ առաջարկի հետ/	Իրականացման բյուջեն գերազանցում է ավագանու հատկացրած սահմանաչափը
7.	Ֆուսբոլի դաշտ երեքը մեկում	Երեխաների առողջ ապրելակերպի և մարզական հաջողություններին նպաստելու համար առաջարկում եմ կառուցել մինի ֆուտբոլի դաշտ երեքը մեկում՝ վոլեյբոլի և բասկետբոլի դաշտերով:	Մերժվել է	Թերի նկարագրություն, անհասցե գրառում
8.	Ֆուտբոլի դաշտի կառուցում	Գրիբոյեդովի Վաչե Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտական խորհուրդը, մեծապես գնահատելով համայնքի աջակցությունը գյուղի խնդիրների լուծման հարցում, առաջարկում է ֆուտբոլի դաշտի կառուցում՝	Ընդունվել է	

		երեխաների մեծ երազանքը իրականություն դարձնելու համար:		
9.	Լուսագյուղ բնակավայրի բարեկարգում	Լուսագյուղ բնակավայրի բնակչության և հատկապես երիտասարդների անունից առաջարկվում է բնակավայրի ֆուտբոլի և վոլեյբոլի դաշտը բարեկարգել (անհրաժեշտ է գիշերային լուսավորություն և ցանկապատ) և հարակից տարածքում կառուցել մանկական ժամանցային վայր (խաղահրապարակ)...	Ընդունվել է	
10.	Ճանապարհի ասֆալտապատում	Հաշվի առնելով այն, որ Մեծամոր գյուղի բնակիչներն ունեն մեծ կապ դեպի Երևան և Էջմիածին քաղաքներ, առաջարկվում է ասֆալտապատել Մեծամորից Ակնաշեն բնակավայրերի ճանապարհահատվածը: Ճանապարհի ոչ բարվոք վիճակի պատճառով դժվարանում է տեղաշարժը, որը հանդիսանում է նաև ավտովթարների, մեքենաների անսարքության պատճառ:	Մերժվել է /կմիավորվի նմանատիպ մեկ այլ առաջարկի հետ/	Իրականացման բյուջեն գերազանցում է ավագանու հատկացրած սահմանաչափը
11.	Ասֆալտապատում	Հարգելի պարոն Ղազարյան. Մեծամոր գյուղի բնակիչների անունից առաջարկվում է քվեարկության դնել Մեծամոր գյուղի վերջնամասից մինչև «Գայի շուկա» կոչվող մեծածախ վաճառակետը ճանապարհի ասֆալտապատելու նախագիծը: Քանի որ գյուղատնտեսական	Մերժվել է /կմիավորվի նմանատիպ մեկ այլ առաջարկի հետ/	Իրականացման բյուջեն գերազանցում է ավագանու հատկացրած սահմանաչափը

		ապրանքները վաճառում ենք մոտակա շուկայում գրեթե ամեն օր անցնում ենք տվյալ ճանապարհով, իսկ ճանապարհի անհարթությունները խոչնդոտ են դառնում ծանրաբեռնված մեքենաների շարժման համար:		
12.	Հայկաշեն-Գայ ասֆալտապատում	Հայկաշեն բնակավայրով է անցնում Ջրառատի գնացքը, որից օգտվում են մեր շրջակա մի քանի գյուղերի բնակիչները՝ հատկապես ուսանողները և քաղաքում աշխատողները: Գնացքի կայարանը գտնվում է գյուղի կենտրոնական մասում: Դեպի կայարան տանող ճանապարհը շատ վատ վիճակում է: Անձրևոտ օրերին հատկապես անանցանելի է դառնում: Հավելեմ նաև, որ մեր գյուղմթերքը վաճառում ենք հարևան՝ Գայ գյուղի շուկայում, որի ճանապարհը նույնպես բարվոք վիճակում չէ: Այդ պատճառով առաջարկում եմ մասնակցային բյուջետավորման շրջանակներում ասֆալտապատել Հայկաշեն բնակավայրի գնացքի կայարանից Գայ գյուղի շուկա ընկած հատվածը:	Մերժվել է	2024 թվականի բյուջեից սուբվենցիոն հայտով հաստատվել է պետություն-համայնք համաֆինանսավորմամբ Հայկաշեն գյուղի ճանապարհի ասֆալտապատման աշխատանքիների հայտը
13.	Ասֆալտապատում	Հարգելի պարոն Ղազարյան, Ցանկանում եմ Ձեզ տեղեկացնել, որ Հայկաշեն-Գայ-Ակնաշեն ճանապարհահատվածը գտնվում է անբարեկարգ վիճակում: Քանի որ Հայկաշեն գյուղի բնակիչները	Մերժվել է /կմիավորվի նմանատիպ մեկ այլ առաջարկի հետ/	Իրականացման բյուջեն գերազանցում է ավագանու հատկացրած սահմանաչափը

		հաճախակի են այցելում քաղաք Էջմիածին, խնդրում ենք ընդունել առաջարկը և ասֆալտապատել նշված ճանապարհը:		
14.	Մեծամոր-Գայ ճանապարհ	Առաջարկում եմ ասֆալտապատել Մեծամոր բնակավայրի սկզբնամասից մինչև Ակնաշեն բնակավայրի վերջը: Նշեմ որ ճանապարհը գտնվում է անբարեկարգ վիճակում, կան ջրափոսեր, քանդված հատվածներ որոնք ստեղծում են վթարային վիճակներ:	Ընդունվել է	
15.	Առատաշեն բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում	Սպորտի զարգացման և առողջ ապրելակերպի խթանման նպատակով առաջարկում ենք կառուցել բազմաֆունկցիոնալ մինի մարզադաշտ, որը կհամատեղի ֆուտբոլի, վոլեյբոլի և բասկետբոլի խաղահրապարակները (երեքը մեկում): Կից տարածքում հնարավոր է նաև տեղադրել թենիսի սեղաններ: Այս դաշտի կառուցումը մեծապես կնպաստի համայնքի երիտասարդների ֆիզիկական ակտիվությանն ու առողջ ապրելակերպի տարածմանը: Այն կդառնա համայնքի մարզական կյանքի կենտրոնը՝ խթանելով մարզական միջոցառումների, մրցաշարերի և ժամանցի կազմակերպումը: սահմաններում:	Ընդունվել է	